

ՀԱՆԴԷՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ


ՄԵՂՈՒՔ

(Շարունակութիւն և վերջ. տես էջ 286.)

Մեղուք երբ իրենց փեթակ շինելու տեղը կ'որոշեն, որ սովորաբար միշտ պատասպարեալ վայր կ'ըլլայ, ինչպէս՝ փոտած ծառերու խոռոչներ, մշակաց փլվիկած խրճիթներ, նախ կը մաքրեն, ապա աշխատաւորք՝ որք որ և իցէ տառապանք ու նեղութիւն յանձն կ'առնուն՝ իրենց պարբերաբաղդ և հանգիստ վիճակի մէջ պահելու նպատակաւ, կ'ըթեման խիժային ծառոց կամ քանի մը բուսոց նորաբողբոյ կոկոններուն վրայ, և տեսակ մը մածուցիկ նիւթ կը ժողովեն, որ 'ի սկզբան գեղնագոյն կամ կարմրի զարնող է, յետոյ կը թխանայ. և անով կը սկսին իրենց բնակարանին ծակտիկքն ու ճեղքերը գոցել. միայն չափաւոր մեծութեամբ բացուածք մը կը թողուն՝ իրենց ելևմտից համար: Այս թխագոյն նիւթն ախանամով (Propolis) կը կոչուի, որ քիչ ատենուան մէջ այն աստիճանի կը պնդանայ՝ որ աղէկ կը պաշտպանէ թէ ցրտէ, թէ խոնաւութենէ և թէ 'ի թշնամեաց: Ծակտիկներն լմննալուն պէս՝ կը սկսին մեղրամոմով բլիթներ և մաղիք կազմել (Ձև 6)։ Երկար ատենէ 'ի վեր կը կարծուէր թէ մեղրամոմն արդէն իսկ բուսոց մէջ կը գտնուի, և մեղուք զայն իրենց ոտից վրայ ունեցող սերմնափուշայ կողովի մէջ ամփոփելով՝ ուղղակի փեթակը կը բերին. սակայն այսօր յայտնապէս իմացուած է՝ թէ մեղրամոմն ուրիշ բան չէ՝ բայց եթէ մարսողութեան ենթակայ գտնուող մեղեր՝ չաքարային մասանց տարարանակաւն ալլափոխութիւնն՝ մեղուի ստամոքսին մէջ, և ապա որովայնին գեղձերէն (Glandule) արտադրուածն:

Պրոպ. Գ.


Աշխատաւորք նախ ստորին կարգէն սկսելով կ'աւարտեն. ապա կարգ կարգ վարէն սկսեալ՝ մաղը դէպ 'ի վեր կը բարձրացընեն. սակայն այն աստիճանի խնայողութեամբ նիւթոյ և տեղոյ՝ որ ամենեւին աւելորդ բան չի կորսուիր: Բլիթներն ամէնքն ալ ուղղահայեաց դիրքով կը կենան. վեց կողմանք ունին, յատակնին գոց ու բրդաձև է, իսկ բերաննին բաց և վեցանկիւն: Մեղուաց նիւթոյ և տեղոյ ըրած խնայողութիւնն յայտն կը կայանայ, որ երբ բազմութիւն բլիթներու քովէ քով



Ձև 6. Բլիթք մեղուաց:

գալով կը միանան՝ բլիթի մը կողերն իր քովիներուն ալ իբրու կողք կը ծառայեն, և ասոնց յատակքն հակառակ գիրքի վրայ գտնուող բլից ևս յատակ կը համարուին: Վասն զի եթէ մաղի մը գիմացէն նայելու ըլլանք, թէպէտ և ասոր վրայ ամենեւին աւելորդ ծակտիք չենք տեսներ՝ բլիթներու վեցանկիւն բերաններն անմիջապէս մէկմէկու հետ կցեալ ըլլալուն պատճառաւ, սակայն ետեւի կողմէն մաղը վերէն 'ի վար եռանկիւն ծակերով լեցուն է. արդ հակառակ դիրքի վրայ գտնուող բլիթներու յատակքն ամենայն ճշգրութեամբ ասոնց մէջ մտնելով փե-

թական վերջին աստիճանի հաստատու-
թիւն կը ստանայ և քաջ կ'ամրապնդու-
թիւններն երեք տեսակ են. նախ և
առաջ պզտիկներն, որ աշխատաւոր
մեղուաց խանձարուրք կը համարուին,
յորոց ուսնիք ալ մեզր ամփոփելու ընդ-
ունարանք են, որ և պակս կ'անուա-
նին. միջակք՝ արուններու համար. այս
երկու տեսակ բլիշներն իրենց պիտոյից
կարեւոր հղած պարէնն հաւաքելու ալ
կը ծառայեն. ապա արքունակաւ կու-
շուածքն՝ թագուհեաց, վերջիններէս
փեթակի մը մէջ 10, 16 և կամ առ ա-
ռաւելն ըստ կանոնի 20 հատէ աւելի
չեն գտնուիր, և հինգէ ալ պակաս չեն
ըլլար. սակայն լայն, երկայն և սովորա-
կան խորշերէ շատ աւելի ընդարձակ
են, գագաթնահայեաց դիրքով բար-
ձրացած՝ միանգամայն հաստատուն և
պաշտպանեալ. ասոնց շինութեանն մե-



Ձև 7. Բլիշ կորն:

ղուք ոչ տեղ և ոչ նիւթ կը խնայեն,
և նոյն իսկ կազմութեան ժամանակը
զարնան եղանակի կը թողուն: Փեթա-
կի մը անմիջապէս ստորոտը արքունա-
կան բլիշներն են, որոց բերանն դէպ
'ի վար կը նայի. ասոնց վրայ արուայն,
իսկ անոնցմէ ալ վեր՝ աշխատաւորաց
խանձարուրքն և պաներն (Ձև 7): Ընդ-
արձակ փեթակ մը մինչև 20, 50 և
կամ 70 հազար մեղու կրնայ պարու-
նակել, որոց մէջ արուններն՝ քանի մը
հազար են, և էգ մը միայն կը դտնուի,
որ կարծես իբրև իշխան՝ անոնց վրայ
կը տիրէ և կը թագաւորէ, որ և քու-
զունի կամ պարսմայր կ'անուանիր:

Պարսմայրն իւր ծննդեանէն քանի
մ'օր վերջը փեթակէն կ'ելնէ և միւս
արու մեղուաց թափառական շրջող
խմբին հետ կը խառնուի. քիչ ատենէն
վերստին փեթակը դառնալով 10 կամ
11 օրէն հաւկիթ ամեւ կը սկսի, և եր-

բմն գրեթէ ալ չի դադրիր բոլոր իր
կենացը մէջ, Առած հաւկիթներն մի-
այն արու մեղուաց և իրաց է. վասն զի
չէզոք մեղուններն մասնաւոր հաւկիթ-
ներէ չեն ծնանիր, այլ էգ մեղու ծնա-
նելիք հաւկիթներէն առաջ կու գան.
պատճառն, ինչպէս վերը ըսուեցաւ,
բլիշներուն և իրենց անդեան տարբե-
ութեանէն կախումն ունի: Այս միջոցս
աշխատաւորք պարսմօր վրայ ամէն հոգ
ու խնամք կ'ընեն, զինքը կը հոգան,
կը մաքրեն, մեզր և սերմնափոշի կը
բերեն որ ուտէ, վերջապէս ինչ պի-
տոյք որ ունի՝ կը լեցընեն: Պարսմայրն
մէկ օրուան մէջ միշտակ հաշուով 1400
կամ 1500 հաւկիթ կ'ածէ, և առ ա-
ռաւելն 2500 կամ 3000էն աւելի չի
կրնար. գեռ հաւկիթ չածած, նախ
զուրկը բլիշն մէջ մխելով կը դիտէ թէ
արդեօք հոն բան մը կայ, և իւրաքան-
չիւր բլիշ մէջ մէկ հատէ աւելի չի դը-
ներ. բայց թէ որ նորէն կամ դիպուա-
ծով և կամ բլջաց սակաւաթիւ ըլլա-
լուն պատճառաւ մէկէն աւելի ալ դնե-
լու ըլլայ՝ առանց յապաղելու չէզոք
մեղուք կը զատեն զմիւսները, և իւրա-
քանչիւր բլիշն մէկ հատէ աւելի չեն
թողոր:

Իգերէ զատ երբեմն նոյն իսկ չէզոք
մեղուններու մէկ քանին՝ դիպուածական
պատահարներով կրնան հաւկիթ ա-
ծել, սակայն այն հաւկիթներէն միայն
արու մեղուք կը ծնանին. և եթէ ու-
զեանիք իմանալ թէ փեթակի մէջ ար-
դեօք այսպիսի մեղուններ կը գտնուին
թէ ոչ, դիւրաւ կը հասկցուի հաւկիթ-
ներու անկորգ և անկանոն կերպով
շարուածքէն. որովհետեւ մի և նոյն
բլիշ մէջ վրայէ վրայ կը լեցընեն:

Մեղուաց հաւկիթներն փոքր են, եր-
կայն, ձուռն, քիչ մը ծուռ և ճերմը-
կի զարնող, Պարսմայրն ամենէն շատ
էգ մեղուաց հաւկիթներ կ'ածէ, յորոց
ինչպէս վերն ըսինք, գրեթէ բոլոր աշ-
խատաւորներ կը ծնանին. իսկ յետ ա-
սոնց՝ արուաց հաւկիթներ առաջ կը
բերէ: Այս հաւկիթներուն վրայ ըլլուե-
լիք հոգ և խնամքն չէզոքներուն կը մը-

նայ. և այն հաւկիթներն՝ յորոց էգեր պիտի ծնանին՝ արուաց և աշխատաւորաց հաւկիթներէն աւելի խնամք կը պահանջեն: Զէզոք մեղուք երեք օր ըս. պասելէ ետեւ՝ նոր հաւկիթներէն կը սկսին թրթուրներ ծնանիլ. քրքուրն (Larve) սպիտակ պզտիկ որդ մ'է, ուրաժ և կակուղ. նորածին կենդանւոյն տեսակ մը եզական կերակուր կը մատակարարեն, զոր ըստ սեռի և ըստ աճման պէտք է փոխել. զոր օրինակ, իգացն տեսակ մը խիւս է, որ երկու մասն մեղրէ, երեք մասն սերմնափոշիէ և չորս մասն ջրէ կը բաղկանայ, և ասոնց առատութեամբ կու տան. իսկ միւս երկու սեռից՝ մեղրախառն սերմնափոշի կը մատակարարեն, որ ՚ի սկզբան ճերմակ և անհամ է, վերջը գրեթէ դեղին ու թափանցիկ, և յետոյ ամենա-



Ձև 8. Թրթուր Թուրաց:

քաղցր. բերած միջոցին կենդանւոյն բերանը իրենք կը բանան և կերակուրը մէջը կը մխեն:

Այսպէս զիրենք չորս հինգ օր հոգալէ ետեւ, աշխատաւորը մեղրամուսով բլիթին կափարիչը արտաքուստ կը փակեն, և թրթուրն ներքը մէկ քանի ժամ աշխատելով ինքզինքը նուրբ մետաքսեայ թելէ հիւստածքով կը պատէ (Ձև 8) ու հարսնեակ (Nymphe) կը դառնայ, ապա քանի մ'օրէն կատարեալ մեղու, և ինքն իրեն բլիթը կը ծակէ դուրս կ'ելնէ: Մէկէն չէզոք մեղուներն վրան կը թափին, զիւրք կը հոգան, կը մաքրեն, կը սրբեն. և որովհետեւ դեռ վրան ու թևերն խոնաւ է՝ կ'աշխատին չորցընել, կերակուր կը բերեն, և ամէն խնամք կ'ընեն. Էգերն այս կատարեալ կերպարանափոխոշ-

քիւնս (Métamorphose) 15 կամ 17 օրուան մէջ կը կատարեն, արուք՝ 24, իսկ աշխատաւորք՝ 21: Յետինքս իրենց ծննդենէն 17 կամ 19 օր վերջը միւս ընկերներուն հետ աշխատիլ կը սկսին. սակայն անկէ առաջ բնափնթակէն դուրս չեն ելներ, որովհետեւ դեռ տկար են և որժ ստանալու մեծ կարոտութիւն ունին:

Նմանապէս արու մեղուներն՝ դեռ քանի որ իրենց կատարեալ կազմութիւնը չեն ստացած, աշխատաւորք միւսներուն վրայ ըրած խնամքին աւանդ ալ կ'ընեն. սակայն կատարեալ կազմութիւն ստանալէն վերջն ալ, ժամանակին բոլորովին դատարկութեամբ և ծուլութեամբ կ'անցընեն. գիշերները, խառնակ օդ և քամի եղած միջոց՝ փնթակի մէջ կամ կը քնանան և կամ անդադար պանրուն եզերքը կենալով՝ անյազարար մեղր կ'ուտեն. քիչ կը շարժին և գրեթէ բնաւ դուրս չեն ելներ, բայց միայն կիզանուտ արեգական միջոց կամ օրուան ամենագեղեցիկ ատենները. կ'երթան իրենք իրենց գլխուն կ'ապրին, և ասդին անդին թիթեռնիկներու նման տատանեալ և դատարկ կը թռչին՝ առանց աշխատութեան ձեռք զարնելու ու առանց բան մը հաւաքելու, և արեգական մոնէլէն շատ առաջ փնթակը կը գառնան. Գնդին մէջ ամենէն օգտակարութիւն չունին, և տեսակը շարունակելէ ՚ի զատ՝ ուրիշ բանի չեն դար:

Արու մեղուաց մահուան վրայ երկու կարժիք կայ. ոմանք կ'ըսեն թէ երբ հազիւ այնան վերջերը կը հասնի և ցուրտն կը սաստկանայ, ծաղիկներն կը թօթափին, բնութեան գեղեցիկութիւնն կը կորսուի և իրենք գաշտերու մէջ կերակուր չեն գտներ ու կը սկսին փնթակը դառնալ որ հոն ալ հանդիստ կեանք մ'անցընեն, և ուրիշներու աշխատութեանց պտուղը վայելեն. այն ատեն աշխատաւորաց մէջ այս պզգեղ և պարագորդ խմբին գէմ վերջին աստիճանի ատելութիւն մը կը

տիրէ. անգուժ կերպով վրանին կը յարձակին, և իրենց մահառիթ խայթոցներով զարուս վերէն 'ի վար անխնայ կերպով կը ջարդեն. նոյն իսկ փեթակի մէջ արուաց թրթուր և կամ հարանեակ չեն թողուր, այլ զամէնքն ալ կը սպաննեն և դուրս կը նետեն, իսկ այլք՝ մանաւանդ այս վերջի անոններս, կ'ըսեն թէ արդէն իսկ արու մեղուաց կեանքն սակաւօրեայ է, որովհետեւ ընդհանրապէս հազիւ չորս ամսէ քիչ մը աւելի կ'ապրին. արդ, երբ աշնան՝ վերջին անգամ փեթակը կը դառնան, իրենց կենաց չըջանը կատարած ըլլալով՝ հոն կը մեռնին. և աշխատաւորաց դուրս հանած արու մեղուներու զիականներն՝ ոչ թէ իրենց սպաննածներն են, այլ բնական մահաւամբ անչնչացածներն, և կամ անոնք՝ որ մեռնելու մօտ կը գտնուին. արդի ժամանակս այս կարծիքս աւելի ստույգ և աւելի ընդունելի կը համարուի:


Սակայն իզգայ կամ թագուհեաց և կամ պարսմոր ծնունդն բոլորովին տարբեր կերպով կ'ըլլայ: Աշխատաւորք գիշեր ցորեկ անդադար կը հսկեն ասոնց արքունական բլիջներուն քով, և երբ ծննդեան ժամանակը կը մերձենայ՝ մեղուաց պարն մեծ չիօթութեան մէջ է: Հին պարսմայրն ամէն ճիգն և ջանք կ'ընէ՝ որ կերպով մը նոր ծնանելիք թագուհւոյն հիւղիկը մերձենայ, և զայն իւր խայթոցովն սպաննէ. սակայն հոն գտնուող անթիւ չէզոք մեղուներու գունդն վրան կը թափին և կը ջանան զինքն արգելու: Իսկ միւս կողմանէ նորածին էգ բանտարկեալն հրնարք և ճար կը բանեցընէ՝ որ կերպով մը բլիջը ծակելով՝ ինքնիրեն դուրս ելնէ. սակայն անօդուտ տեղ կը տան. ջուր, 'ի դուր՝ նեղուած և նեղացած ճիւղ և ձայներ կը հանէ. վասն զի աշխատաւորք ամէն ջանքով զինքը չեն թողուր՝ որ դուրս ելնէ. և իր ներքուստ բանալ ջանացած ծակերը՝ իրենք արտաբուստ մոմով կը գոցեն, և կ'աշխատին դեռ փակ պահել: Այսու հանդերձ անխնամ ալ չեն թողուր, այլ ա-

ռատութեամբ պիտոյքը կը լեցընեն. որովհետեւ արքունական բլիջն ծակ մ'ունի՝ ուսկից էգն իւր բերանը կը բանայ, և աշխատաւոր մեղուք այն ծակէն իրեն հարկաւոր եղած կերակուրը կու տան: Այսպիսի վերջի աստիճան չիօթութեանց ժամանակ, հին թագուհին երագութեամբ փեթակին մէջ մէկ երկու շրջան կատարելէ ետեւ, բարկութեամբ և նեղանալով յանկարծակի կը թողու զայն, և բռն կերպով դուրս կը վազէ. նոյն վայրկեանին մէկէն իրեն կը հետեին անհամար գունդ մը գործաւոր և արու մեղուաց, և խումբովին միանալով՝ գաղթել կը սկսին, զհին պարսմայրը միշտ իրենց զուխ ճանչնալով:

Այս գաղթական մեղուաց դուրս ելնելէն քիչ ետքը՝ չէզոք մեղուններն կը բանան թագուհւոյն բլիջն բերանը, և զինքը տըտա կը թողուն: Հազիւ դուրս ելած՝ միւս արքունական բլիջներու քով կը պտըտի, և եթէ էգ մեղուի մը հանդիպելու ըլլայ՝ ահաւոր կռիւ կը սկսին, մինչև որ մէկն զմիւսը սպաննէ. որովհետեւ անկարելի է խուսիլն մէջ մէկ հատէ աւելի պարսմայր գըտնուիլ: Դիմացէ դիմաց կու գան, զլուխ դիտու կու տան, երես երեսի, լանջք լանջոց, և ամէն ջանք կը թափեն՝ իրենց հազգին խայթոցներով՝ մէկըմէկ սպաննելու: Պատերազմն կ'երկարի, սակայն աշխատաւորք բնաւ չեն թողուր որ կամ դադրի և կամ փախչին հեռանան և կամ մէկմէկէ բաժնուին. այլ ընդ հակառակն կը գրգռեն զայն յառաջ մղել, որովհետեւ պէտք է որ մէկն սպաննուի: Վերջապէս մէջերնէն զօրաւորն միւսին թեւոց տակէն կը խածնէ, և ցատքելով վրան կ'ենէ. կը յաղթանակէ անոր, և իւր խայթոցովը զայն գիտին կը փռէ. քիչ ատենէն յաղթահարեալն բոլորովին տաւրաւացած՝ մէկէն կը մեռնի: Գանի մ'օրուան մէջ դարձեալ անթիւ աշխատաւորք և արուններ ծնանելով՝ մեղուաց պարն վերստին կը բաղմանայ, և այսպէս քիչ ժամանակէ ետքը յորիչ գաղթական-

նութիւն մ'ալ կը սկսի: Իրբեմն մի միայն փեթակէ՝ տարւոյն չորս եղանակաւ ցը մէջ երեք չորս բազմաթիւ գունդեր կը գաղթեն, սակայն յետինքն երթալով միշտ կը տկարանան: Խիստ քիչ անգամ մի և նոյն փեթակի մէջ երկու պարսմայրներ տեսնուած են, սակայն միշտ մին ծերացած մեռնելու մօտ, իսկ միւսն դեռ սակաւօրեայ և նորածին: Պարսմայրը ընդհանրապէս չորս հինգ տարիէ աւելի չեն ապրիր:

Իսկ այն գաղթեալ մեղուաց պարն՝ քանի որ յատուկ բնակարան մը կ'որհարեալ կերպով չէ շինած, գիշերը և կամ օրուան մէջ հանգչել ուզած միջոցին՝ ծառոց ճիւղերու վրայէն իրենց թափից ծայրերովն մէկգմէկ բռնելով՝ ողկուղաձև կը կախուին (Ձև 9), և մէկէն քանի մ'օրուան մէջ փեթակ



Ձև 9. Ողկուղաձև պար մեղուաց:

կը շինեն: Ասոնք ալ բազմաանալով՝ կամաց կամաց ուրիշ գաղթականութիւններ և զանազան բաժանումներ կ'ըլլան, որով պարերու թիւն կ'աճի:


Գաղթականութիւնը սովորաբար կէս օրուան միջոցները կը կատարուին, քանի որ դեռ օդն տաք և երկինքն պարզ ու հանգարտ է. սակայն առաջուց քանի մը նշաններ կու տան: Նախ՝ որ աշխատաւորը ժամանակին դատարկ կ'անցընեն, և կը սկսին արուակ հետ փեթակին չորս կողմը պտրտիլ. միայն մէկ քանին մեղր և սերմնափոշի հաւաքելու կ'երթան, և անոնք ալ դառ-

նալով ժողովածնին բլիջներու մէջ չեն ամփոփեր: Աշխատաւորը մեծ անհանգրստութեան մը մէջ են, անգործ կը շրջին և անսովոր ծակերէ՝ փեթակէն դուրս կ'եննեն. եթէ գործ մը սկսեր են՝ կամ կը զաղրեցնեն և կամ կէս կը թողուն, գիտնալով՝ որ իրենց աշխատութեանց պտուղը ուրիշներն պիտի վայելեն: Իսկ գաղթականութեանց պատճառներն զանազան են. իդաց մէկմէկու դէմ ունեցած հակառակութիւնն և ոխն, հետեւաբար աշխատաւորաց ալ ասոնցմէ կրած նեղութիւնն, պարսմոր մահն, խմբի մը յետին ատիճանի տկարութիւնն, օտար թշնամեաց յաճախ յարձակումն, և այլն: Այս դէպքերէն բռնադատեալ երբեմն ոմանք միայն խուսբէն կը բաժնուին և կը հեռանան՝ աւելի բարերապէս փեթակի մը գտնելու նպատակաւ. սակայն անկարելի է՝ որ մեղու մը ուրիշ փեթակ կարենայ մտնել քանի որ հոն չէ ծնած. այս պատճառաւ հակառակորդը զասոնք կ'արտաքօսեն և կամ անխնայ կերպով կը սպաննեն:

Մեղուաց խայթոցն իրենց անձնական պաշտպանութեան գլխաւոր զէնքն է. ասոր հարուածն երբեմն մեծամեծ վէրքեր, ջերմ, մինչև նոյն իսկ ուրիշ կենդանեաց մահ կրնայ պատճառել: Խայթոցն երկու ճիւղ բաժնուած է, և երկուքին ծայրերն ալ սրլաքի պէս սուր են. սովորաբար խայթած միջոցին՝ նախ անով թոյնը վէրքին կը հաղորդեն, և ապա խայթոցը կոտրելով՝ վէրքին մէջ կը մնայ: Մեղուն իր զայրութիւն ժամանակ երբ անողնաւոր կենդանիները կը խայթէ, նորէն իր խայթոցը ետ կրնայ քաշել և այսպէս չի ալ վնասուիր. սակայն ըզնոյնը չկարենալով ողնաւոր կենդանեացմէ ալ դուրս հանել, (որովհետեւ ասոնց անդամոց վրայ եթէ ծակ մը բացուի՝ մարմինը մէկէն վերստին իր առջի դիրքն կ'առնու և դարձեալ սերտ կը միանայ), այս պատճառաւ մէջը կոտրելով՝ մեղուի մահուան առիթ կ'ըլլայ, որովհետեւ աղիքներն ալ կը

Ֆլասուին: Մեղուներու թոյնն երկու փոքրիկ գնդակաց մէջ ամփոփեալ է, որոնք միջնորդ խողովակի մը ձեռքով՝ խայթիչ և մահառիթ գործարանին հետ կը հաղորդուին և զայն անոր մէջ կը հեղուն. այս գնդակներուս պարունակած թոյնն միջնակալ քրուշտ (Acide formique) կ'անուանի¹, որ օդոյ մէջ ցնդական, իրոյ մէջ լուծուող անոդոյն հեղանիւթ մ'է, բարկ հոտով, միանգամայն կծու համ ունի: Ասիկայ ընդհանրապէս ամենամեծ վնասներ չի

պատճառեր, սակայն ըստ պարագայից կրնայ հետեանքն ալ ծանրանալ. ինչպէս, զոր օրինակ, եթէ վնասուող անձն տկար կազմուածք ունենայ, կամ խայթուածքն փափուկ գործարանի մը հանդիպի, կամ հարուածներն բազմաթիւ ըլլան, և այլն: Այսու հանդերձ մարդս մեղուներու թոյնին շուտով կը վարժի. և արդէն իսկ խայթուածքին ցան՝ քանի մը վայրկենէ կ'անցնի, ուռնցքն ալ մէկ քանի ժամէ կ'իջնայ. սակայն միշտ օգտակար է իրրու դեղ՝



Ձև 10. Մեղաց փեթակներ:

նոյն միջոյ խայթողը մարմնէն հանել և վէրքը ձիթով կամ շուշանի իւղով, քացախախառն զով ջրով կամ սոխի ծուծով և կամ կրի ջրով աղէկ մը օծել. նոյն իսկ ուռնցքին վրայ ցեխ զը.

¹ Ահհէն առաջին անգամ շլարմիր մըլիւնները թորեցընելով՝ ասոնցմէ մըլնական թթուուտ հանեց, որ շատ մետաղներ կը վերածէ և զանազան աղեր կը կազմէ: Հիմակուան ժամանակս այլ և այլ նիւթերէ տարբեր կերպերով կը հանեն զմըլնական թթուուտը. այս կերպերէն մին հեռեալն է.

Մեծ եղէր (cornue) մէջ կ'եռացընեն զօսայ (amidon) մազնառական թթուէի (Sesquioxide de manganèse) և ջրախառն ծծմբական թթուուտ

նելը մեծապէս օգտակար է: Որչափ ալ սոստիկ ըլլայ եռացումն՝ այնու հանդերձ ամեննին պէտք չէ չփամփ ուռնցքը զրգոսել. որովհետեւ արիւնն դէպ 'ի խայթուածքը ժողովուրելով՝

տի (Acide sulfurique) հետ. ոչապէս միւս ընդունարանի մէջ թթու հեղանիւթ մը կը ժողովի, զոր պէտք է յագեցընել բնածխառ կապարով (Carbonate de plomb), որպէս զի ըստ ասանքը գորմատ կապարոյ (Chromate de plomb), որ և ապա կը րիւրեղանայ. արտադրեալը ջերմութեամբ ծծմբառու ջրածնի (Hydrogène sulfuré) հասանքով կը լուծեն և կը գոյանայ թթուուտ մըլնական:

թոյնն մարմնոյն ամէն մասանց դիւրաւ կը տարածուի .

Մեղուք ամենամեծ չափ և օգուտ կը մատակարարեն մարդու, և այս պատճառաւ ամէն քաղաքականացեալ երկիրներու մէջ՝ միւս բնական կենդանեաց պէս խնամքով կը հոգացուին, և կը պահուին ծառաստանաց և ծաղկեալ պարտիզաց մէջ (Ձև 10) . իրենց բերքերուն ամենէն գլխաւորն մեղին է, զոր ծաղկանց նեկտարէն և մանսաւանդ անուշահոտ բոյսերէ կը ժողովեն, ինչպէս են հուսամ, ծոթորին, և այլն . դարձեալ այլ և այլ ծառոց գուրս տուած չաքարային հիւթերէ, հասունացեալ պտուղներէ, որոնց երեսը քիչ մը քերթուած կամ ճաթած

լոթան
ստուգն
խաւի
ստամոքս
— քիւ
թափան



Ձև 11. Մեղաբեր մեղուին մարսողութեան գործարանն .

ըլլան, զսնաղան տեսակ օշարակներէ, և նոյն իսկ քանի մը մանր կենդանեացմէ, որոնք իրենց բերնէն քաղցր հեղանիւթ մը կ'արտահոսեն . Մեղուաց մեղր հաւաքելու միջոցը օրուան ամենէն տաք ատենն է . նոյն ժամանակները կը թռչին կ'երթան ծաղկանց վրայ, և կ'ը սկսին նեկտար ծծել մինչև որ ասիկայ իրենց ըմպանը (Pharynx) բարձրանայ (Ձև 11) . քիչ մ'առնեն նեկտարն կամաց կամաց ստուգն (Esophagus) կ'իջնէ և անկէ խաւիին (Jabot) մէջ՝ որ փամփոշի նման մաշկեղէն պարկ մ'է, և երբոր լեցուի՝ վերջին աստիճանի կ'ուռի և կ'ընդարձակի . արդ հոս հասնելով մեղր կը դառնայ

և իր ընթացքէն ալ կը դադրի . որովհետեւ ասկէ ետքն անմիջապէս ստուամաքսը կու գայ, որոյ ստորին ծայրն աղեւաց հետ հաղորդակցութիւն ունի, և աղիքն բաւականով (Rectum) կը վերջանան, կենդանին իր կերածնէն թուն կատարեալ մարսողութիւնը երկու վերջի գործարանաց ձեռքով կը կատարէ, որք են ստամոքս և աղիք .

Իւրաքանչիւր մեղու իր ժողոված մեղրը երեք մասն կը բաժնէ . մէկ մասն իրեն, միւսն որ իր պիտոյից գործածածէն աւելցած է՝ ապագայ կարօտութեան և հասարակաց համար կ'ամփոփէ . իսկ երրորդ մասը՝ թրթուրներու կու տայ . Զարմանալի է նաև մեղուաց մեղրը վրայ ցուցած և տարած հոգն ու խնամք . Նախ և առաջ երբ հաւաքելով փեթակը կը դառնան, զայն հոն ամբողջ կը պարպեն . և աչքերնին մթութեան մէջ տեսնելու վարժած ըլլալով գիշեր ցորեկ անդադար կ'աշխատին՝ որ իրենց բերածներով բլիշները լեցնեն և տեղաւորեն . Դարձեալ մեղրը անարատ պահելու համար, որպէս զի չըլլայ թէ թթուի կամ ապականի՝ իւրաքանչիւր բլիշն բերանը մեղրամովէ կափարչով կը գոցեն . և եթէ յանկարծ դէպք մ'ալ հանդիպի՝ որ բնակարաննուն կործանումն սպառնայ, և ժողոված պաշարնին աւերելու վտանգ, զայն արգիլելու ամէն միջոցներ կը բանեցընեն . իսկ իրենց ունեցած վերջին աստիճանի յիշողութիւնն՝ մեղր ժողովելէն յայսմի է . որովհետեւ եթէ ոմալք փեթակէն շատ հեռու տեղեր ալ մեղր գտնելու ըլլան՝ նախ կրցածնուն չափ անկէ կը ժողովեն, և յետոյ նորէն կամ առանձին և կամ խմբովին՝ ուղղակի նոյն տեղը կը դիմեն՝ առանց ճամբան մոլորելու . Դարձեալ եթէ տեսակ մը ծաղկանց վրայ, յէն նեկտար ժողովել սկսին՝ որպէս զի մեղր չիսնեն, մինչև ետքը միշտ մի և նոյն տեսակը կը փնտռեն, և գտնելով՝ միայն անոր վրայ կ'երթան . սակայն երբ ծաղկանց տեսակը շատ քիչ է, այն առանձն մեղուք ամենէն ալ հաւասարա-

պէս մեզր կը հաւաքեն, իւրաքանչիւր տարի մեղուաց ժողոված մեկեր քանա-կութիւնն՝ իրենց սննդեան պէտք եղա-ծէն մեծապէս աւելի ըլլալուն պատ-ճառաւ՝ մօրդուս ամենազնիւ բերք մը կը մատակարարեն։ Երբ կամաց կա-մաց աշունն յառաջել սկսի, ցուրտն սաստկանայ և երթալով զօրանայ, մե-ղուք փեթակի մէջ կ'ամփոփին և թրմ-րած կը կենան. այսպիսի եղանակի մէջ՝ կ'երածնին ոչինչ է, և եթէ արե-գակնային ու գեղեցիկ օրեր ըլլան, այն ատեն սովորականէ դուրս պարզ քա-նի մը թեթեւ շարժումներու ալ կը կա-տարեն։

Միզեր ազնուութիւնն և գոյնն կը զա-նազանի ըստ տեղւոյն՝ ուր որ հաւա-քուած է, և ըստ բուսոց՝ յորոց մեղուք դայն ժողովեր են. նոյն իսկ իրենց բար-կութեան ժամանակ շինած մեղրն՝ հանդարտ միջոց շինածնէն տարբերու-թիւն ունի. վասն զի առաջինն միջնա-կան թթուութեամբ կը պարունակէ, որ թէ-պէտ շատ քիչ քանակութեամբ է՝ սա-կոյն ախորժելի համ մը կու տայ. մինչ-դեռ յետինս՝ այս թթուութեամբ չպարու-նակելով՝ այն ախորժելի համն ալ չու-նի։ Այսպէս նաև գաշտաց մեղրն շատ աւելի անոյշ և քաղցր է, ոլորտիզացն՝ քաղցրահամ միանգամայն և հոտաւէտ, լերանցն՝ համեմեներու հոտ և թեթեւ կծու համ մը ունի, մինչդեռ անտա-ռաց մեղրն ասոնցմէ բոլորովին կը տարբերի։ իսկ տառտութիւնն զանա-զան պատճառներէ կը կախուի. ամէն բոյսեր հաւասարաշափ մեղր չեն տար, և նոյն իսկ մի և նոյն տեսակներէն եր-բեմն նուազ և երբեմն առատ կ'ենէ. և այս՝ ըստ եղանակին, ըստ երկրին և ըստ զանազան պայմանաց կրնայ փո-խուիլ։ Միզրն առաջ շատ աւելի կ'որ-ժէր, սակայն եղեգի և միւս զոնազան շաքարաց գտնուելէն վերջը՝ երթալով նուազեցաւ գինն. ինչպէս նաև մեղրա-մոմի գինն ալ քար - իւղի (Pétrole), բնաճարպի (Stéarine) և բուսաւորու-թեան կազի (Gaz d'éclairage) գիւ-տերով։

Կենդանեաց մէջ մեղուներու դէմ շատ թշնամիներ կը գտնուին, յորոց նշա-նաւորք և ամենէն ռիսերիմը մկներն և մոմի ցեց (Teigne de la cire) կոչուած ներն են։ Մկներն գլխաւորաբար ձմեռ եղանակի մէջ ասոնց շատ մեծ քանա-նեի կը հասցընեն, և եթէ մէկ մը փե-թակի մէջ կարենան մոնել, ի բաց ա-ռեալ արտաքոյ կարգի արգելչ գիւ-պուածներէ, սովորաբար թէ մեղու-ները և թէ մեղրը կ'ուտեն կը լնցը-նեն, և փեթակը աւերելով՝ կ'ենեն կ'երթան, իսկ մոմի ցեցըստածքն՝ թիւ թեռնիկներու կը նմանին՝ որոնք իրենց հակիթները փեթակին ամենափոքր ծակերուն և կամ եղբայր վրայ կը թռ-դուն. ասոնցմէ բազմաթիւ թրթուր-ներ ենելով՝ մէկէն իրենք զիրենք մե-տաքսէ պատենի մէջ կը ծածկեն, որ իրրե վահան մեղուի խայթոցաց դէմ կը պաշտպանէ, և կամաց կամաց ի-րենց պատեանը փեթակին մէջ երկըն-ցընելով՝ կը սկսին բոլոր մաղերն աւ-րել, եթէ ասոնք մէկ մը բազմանան՝ անհնարին և անկարելի բան է դէմ կենալն, վասն զի քիչ ատենէն բնա-կարանն վերէն ի վար աւերակ կը դառնայ. մեղուք ամենայն զօրութեամբ կը ջանան պատերազմիլ, և կըցածնուն չափ շատ մը հակիթներ, թրթուրներ և հարսնեակները դուրս կը հանեն, և հեռաւոր տեղեր տանելով կը նետեն։

Գործեալ ասոնցմէ զատ իրրե թըշ-նամի՝ տեսակ տեսակ ճճակեր թռչունք կը գտնուին, որոնք օդոյ մէջ թռած միջոցին մեղունները կ'ուտեն. և եթէ զիպուածով պարսմայրը ձեռք ձգելու ըլլան՝ այն ատեն խումբին կորուստն շատ մեծ է։ Պիծակներ՝ որոնք մեղրը գողնալու համար փեթակաց մէջ կը մանեն, և եթէ ընդդիմացողք գտնուին՝ զամէնքն անխնայ կը սպաննեն։ Գոր-տեր, միդէք և սարդեր. սակայն այս կենդանիք շատ մեծ քանակներ չեն կոր-նար հասցընել, և մանաւանդ յետինքս՝ որ միանգամայն տկար ալ են. մեղուք վրանին կը յարձակին, և խայթոցնե-րով կը սպաննեն։ Մըլիւնք ևս քանա-

կար են, վասն զի մտնր կենդանիներ ըլլալով՝ բլջաց մէջ դիւրութեամբ կը մտնեն և մեղրը կ'ուտեն։ Մեղրը որ պէս զի կարենան այս կենդանեաց դէմ դնել, իրենց անձնական պաշտպանութեան համար ականամամէ պատնէշներ կը բարձրացնեն, և փեթակին մէջ սատկեցուցածնուն դիակը, եթէ իրենց ոյժը չի բաւեր զայն դուրս հանելու, ականամամով կը ծածկեն որ չհոտի։ Որովհետեւ երբեմն մեղրաց փեթակներու մէջ խխուճներ և կամ դաշտաց մկներ տեսնուած են՝ զորս սատկեցնելէ ետեւ ականամամով ծածկած են։

Սակայն 'ի վեր քան զամենայն՝ երբեմն մէկմէկու դէմ կռիւներ կ'ունենան. վասն զի այս կենդանիք փափազելով որ իրենց հաւաքած պաշարն օր ըստ օրէ աւելցնեն, երբ կամաց կամաց կը տեսնեն որ դաշտաց ծաղկածութիւնն երթալով կը դադրի և ուրիշ տեղերէ պարէն չեն գտներ, փեթակի մը բնակիչք ուղղակի ուրիշ տեղար խուփի վրայ կը յարձակին՝ զայն կողոպտելու նպատակաւ։ Ի սկզբան ասոնցմէ միայն մէկ քանին երթալով բեռնաւորուած կը դառնան իրենց բնակարանը. երկրորդ անգամ աւելի բազմութեամբ ճամբայ կ'իյնան, և վերջապէս խմբովին տուր փեթակին վրայ կը զիմեն. կռիւն վերջին աստիճանի կը սաստկանայ, երկու կողմանէ մեռեալք գետին կը փռուին, սակայն հուսկ յետոյ ընդգդիմացող տկար մեղրք սպաննուելով՝ բոլորովին կ'ոչընչանան։

Թշնամեացմէ և կամ պատերազմներէ զատ, ինչպէս ուրիշ ամէն կենդանիք՝ նոյնպէս մեղրք ևս այլ և այլ աղիւտայի հիւանդութեանց ենթակայ զբանուելով իրենց կենաց ընթացքը ժամանակէն առաջ աւելի երազ և աւելի փութով կը կատարեն։ Հիւանդութեանց զխաւոր պատճառներն ձմեռնային ցուրտի երկարելն է, բնակարանն ուն աղէկ պատասպարեալ չըլլալն, և կամ թէպէտ և չորս կողմանէ աղէկ

պաշտպանուած ըլլայ, սակայն մեղրք սակաւաթիւ ըլլալով՝ չկարենան զփեթակը տաքցնել. դարձեալ մեղեր անպիտանութիւնն, սերմնափոշոյ պակասութիւնն, և այլն։

Այս է ահաւասիկ մեղրաց կեանքն, զորս հիմակուան ժամանակ զխաւորապէս մեղրի և մեղրամոմի համար կը դարմանեն, զանազան տեսակ հոտաւէտ բոյսերով և ծաղկամբք զարդարուած պարտէզներու և դաշտաց մէջ։ Հնուց 'ի վեր ասոնց յարգը բոլոր ազգեր գիտցեր ու իմացեր են, և նոյն իսկ Սուրբ Գիրք և Սուրբ Հարք զանց չեն ըրած զասոնք յիշելու և ասոնց վրայ ճառելու. իսկ հեթանոսաց մէջ մեծամեծ բանաստեղծք և հեղինակներ երկայն բարակ կ'երգեն և կը գրուատեն։ Աւելորդ է ըսել թէ մինչև հիմայ օր օրուան վրայ աշխարհիս չորս կողմը ըզմեղրուս հոգալու և դարմանելու աբուռեսն կը յառաջագիմէ և կը զարգանայ՝ միշտ աւելի շահաւոր ու արդիւնաբեր կերպով. և մեղրք գովեստից և գովասանաց նիւթ եղած են, մանաւանդ արդի ժամանակիս բնաբաններուն՝ յորոց երեկելի մէկուն խօսքերով՝ յօգուածիս վերջ կու տանք։

« Սէր կարողաբութեան և աշխատանքի, մասնաւոր ծառայութեանց բարւոք տրամադրութիւն, գործոց և զանաւորի և միջոցներու խնայելի խնայելութիւն, հասարակաց գանձուց գործածութեան խիստ հսկողութիւն, աշխատաւորաց՝ սաստիկ ատելութիւն պարագորգաց դէմ և անոնց Զնչումն, օրինաւոր թագաւորութիւն՝ հիմնեալ ազգային գերագոյն իշխանութեան ըսկզբանց վրայ, լուսամիտ անձնանութիւն, անձնուրացութիւն սոսկականաց առբարին հասարակաց, հաստատուն և ստէպ խիստ գործադրութիւն այս ըսկզբանս՝ թէ Ժողովրդեան փրկութիւնն գերագոյն օրէնքն է, անյաղթելի յարումն առ հայրենիս, սոսկումն օտարաց արշաւանքէն և անդու պահպանութիւն զրանց քաղաքին, արքու-

նական գահուն պարապութենէն յառաջ պախիբ անիշխանութեան գէմ հիա նալի նախադգուշութիւնք. ասոնք են ահա այն դաշնապրոյն քանի մը հանգամանքներն՝ զոր մեղովք կէտ առ կէտ 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցայսօր կը գործադրեն։ Այս միշտաբո եգիպտա։

ցւոց համար թագաւորութեան խորհրդաւոր նշանք կը համարուէին. բայց մարդս քաջ քննելով՝ կը համազօւի որ եթէ մեղուայ ընկերութիւնն պետութիւն մի է, կրնայ արժանապէս լսւազոյն հասարակապետութիւնն համարուիլ ։

Հ. Պ. ՔԱՅՏԱՆՅԱՆ :

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀ ԱԳՐՈՒԹԵԱՆ

Պատկերազարդեալ 200ի չափ գեղեցիկ տեսարաններով

ՅՕՐԻՆՅՑ Հ. ԴԱՆԻԷԼ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Մի հատորիկ երկոտասանածալ. գինն է ֆռ. 1.50 :

ԱՅՏԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ. — Աշխարհագրութեան պէս քիչ ուսումն կայ փոփոխութեան ենթակայ. ըստ արտաքին երեւութիւնն է ըստ քաղաքական անցից՝ հողագունտս չէ նոյն՝ ինչ որ էր հարիւր տարի առաջ : Ուր երբեք անկերգի առաջուտք կը ծածկէին ընդարձակ մակերևոյթ մը, այժմ երկու հանգիստակաց ծովաց բազուկներ իրարու ձեռն կարկառելով՝ զքաղաքականութիւնն և զառաստուութիւն իրարու հետ կը փոխանակեն. երբեք հեթանոսութեան և բարբարոսութեան խաւարին մէջ խորիպօղ ժողովուրդք՝ այսօր աւետարանին լուսով պայծառացեալ՝ կ'աճին և կը զարգանան, և իրենց թառ անտառներն և հիւղերն՝ գեղեցկաշէն քաղաքաց և պալատաց տեղի կու տան : Ընդհակառակն՝ բարբեր ցամաքներ և ծաղկեալ քաղաքներ՝ բնութեան պատահանութեան զոհ կ'ընթան, 'ի գետաց և 'ի ծովէ ջրաղղ լինելով, կամ երկրի զորքմանէն հիմնայատկուելով : Ուրիշ հողներ տերութիւնք զինու զօրութեամբ իրենց սահմանները կ'ընդարձակեն, առանձնապէս Եւրոպայէ զուրս հնաւոր աշխարհաց մէջ :

Արդ, աշխարհագրութեան դասաւոր մը հասարակաց ընդունելի լինելու համար, հարկ է որ յիշատակութեան առումս այս աննազգի անքերը :

Ի բաց թողլով այն ուսման վերաբերեալ զանազան ժամանակ հրատարակեալ ծանր և արգիւնաւոր գրութիւնք, ժամանակահան դպրոցական դասագիրք մը (Հ. Ստեփանոսի Վ. Երազմեան) լրջս տեսնել էր, որ երկու ապագրութիւնէ յետոյ՝ օգտակարութիւնը մասամբ կորսնցուց, վերոյիշեալ պայմանաց չհամապատասխանելով :

Ուստի այս առժամանակեայ պարապութիւնս լրացունելու գիտմամբ կը հրատարակենք առաջինայ գերատար և պատկերազարդ՝ դասագիրքից, հետեւելով ընդհանրապէս Առսար գաղղիացոյ աշխարհագրութեան պարզ ոճին, որոյ մինչև ցարդ 40^{րդ} տպագրութիւնն՝ իւր յետին զօգնականն է : Ասկէ զատ առջ առջև ունեինք նաև Ե. Գոռլանպէտի, Ռ. Ռիզլիսի և Աբխաթարէլլէայ նոր գործերն : Այժմակապրական տեղեկութիւնք ընդհանրապէս ըստ վերջին հրատարակութեանց կոմիտէի գրուած են : Այսու հանդերձ կը խոստովանենք որ ամենամանր կրկնող մը կրնայ 'ի թուային մասին տեղ տարբերութիւն գտնել յօտարազգի դասագրոց, սակայն պէտք է դիտել՝ որ յայդմ մասին ոչ որ յաշխարհագրաց համանշան է ուրիշ մը հետ. մեք այնմ հետեւեցանք՝ որ աւելի հաւանական թուեցաւ :

Յուսալով որ այս փոքրիկ երկաթիւրութիւնս ուսումնասիր պատանեաց և անոնց ուսուցչաց ընդունելի անցի, կը խոստանանք՝ այժմէն 'ի նկատի առնել ամեն քաղաքական և բնական դեպք, որք որ ըստ օրէ կը հանդիպին. որպէս զի յերկրորդ տպագրութեան կարեւոր համարուած փոփոխութիւնները կատարենք :

Ի վերջ գրուելիս կը գնենք ցուցակ մը իւրաքանչիւր տերութեան տարածութեան, բնակչաց, մայրաքաղաքաց և անոնց բնակչաց, գործոյս տպագրութեան ժամանակ եղած ամենամոր հրատարակութիւններէ քաղելով :

• Այս գրութեաց չափով մը ներկայութեան է ըմբերաց և շոյն ստանալ փոփոխութեան համար՝ ներկայ Գրական կոչոյ մըս :